ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երեւան, Ղազար Փարպեցի 9բ
հեռ.՝ + 374 10 53 00 67, էլ. փոստ՝ meo@ypc.am

Դիտորդ մարմնի կազմը

Դավիթ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ
Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ռուբեն ԲԱԲԱՅԱՆ
Լեւոն ԲԱՐՍԵՂՅԱՆ
Շուշան ԴՈՅԴՈՅԱՆ
Կարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Արա ՇԻՐԻՆՅԱՆ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Վիգեն ՍԱՐԳՍՅԱՆ
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԶԼՄ-ՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ

«Մելիք Բաղդասարյանն ընդդեմ շատերի» գործով՝

«Ֆոտոլուր» լրատվական գործակալության տնօրեն Մելիք Բաղդասարանի՝ մի շարք լրատվամիջոցների կողմից «Ֆոտոլուրի» արտադրանքն առանց հեղինակային իրավունքը հաշվի առնելու օգտագործման բազմակի դեպքերի կապակցությամբ ներկայացրած դիմումի վերաբերյալ:

Ա. ՓԱՍՏԵՐ

1. 2023 թվականի դեկտեմբերի 16-ին Հայաստանի ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմին է դիմել «Ֆոտոլուր» լրատվական գործակալության տնօրեն Մելիք Բաղդասարյանը՝ նշելով, որ մի շարք լրատվամիջոցներ (Armday.am; Freenews.am; Analitik.am; Hayeli.am; Noyantapan.am; Civic.am; Mediahub.am), չլինելով «Ֆոտոլուր» գործակալության բաժանորդ, 2022-2023թթ. ժամանակահատվածում անսահմանափակ ձեւով (անհատույց) օգտագործում են գործակալության թողարկած լուսանկարները, ընդ որում հաճախ՝ կտրելով հեղինակի տարբերանշանը: Դիմումատուն խնդրում է գնահատել նշված վարքագիծը եւ խախտումները փոխանցել Տեղեկատվական վեճերի խորհրդի քննությանը:

2. Քննության առնելով Մ. Բաղդասարյանի դիմումը, 2023-ի դեկտեմբերի 17-ին Դիտորդ մարմինը նամակներ է ուղարկել բողոքում նշված լրատվամիջոցների ղեկավարներին եւ պարզաբանում խնդրել նրանցից, ինչպես նաեւ լրացուցիչ տեղեկատվություն է ստացել դիմումատուից: Բաղդասարյանը տեղեկացրել է, որ նշված լրատվամիջոցներին քանիցս զգուշացրել է խախտումների մասին եւ խնդրել է գործակալության լուսանկարներն օգտագործել պատշաճ կերպով, սակայն ապարդյուն: Ըստ դիմումատուի՝ նա անգամ խնդրի վերաբերյալ դատական հայց է ներկայացրել ընդդեմ «Նոյյան տապան» գործակալության, իսկ «Ֆրի Նյուզը» ինչ-որ պահի լուսանկարներն օգտագործելու պայմանագիր է ստորագրել «Ֆոտոլուրի» հետ, որը, սակայն, չեղարկել է 2 շաբաթ անց: Բաղդասարյանը նշում է, որ թվարկված լրատվամիջոցներից շատերը զգուշացումից հետո խոստացել են

այլեւս հեղինակային իրավունքի խախտմամբ չօգտագործել լուսանկարները, բայց դրժել են խոստումը։

3. **Մելիք Բաղդասարյանի ուղարկած հղումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ**
ա) Armday.am-ին վերաբերող 5 հղումներից 3-ում «Ֆոտոլուրի» հեղինակային ջրանշանները տեսանելի են, 2-ում՝ չկան (կտրված են)։
բ) FreeNews.am-ից բերված բոլոր 5 հղումներում «Ֆոտոլուրի» տարբերանշանը բացակայում է։
գ) Analitik.am–ի 5 հղումից 3-ում լուսանկարներն առանց տարբերանշանի են, 2-ում՝ տարբերանշանով։
դ) Hayeli.am – բոլոր հինգը՝ առանց տարբերանշանների։
ե) Civic.am - 5 հղում, որոնցից բոլորում լավ տեսանելի է «Ֆոտոլուրի» ջրանշանը։
զ) Mediahub.am - 5 հղում, որոցից ոչ մեկում լուսանկարը ջրանշան չունի։
է) «Նոյյան Տապան» - 9 հղում, որոնցից 5-ը ՆՏ համացանցային էջից հոդվածների հղումներ են, 4-ը՝ «Նոյյան տապան» շաբաթաթերթի PDF տարբերակները։ Վերջիններս պարունակում են տասնյակ լուսանկարներ, որոնց ճնշող մեծամասնության վրա հեղինակի մասին որեւէ նշում չկա (ո՛չ ջրանշան, ո՛չ ուղեկցող գրություն)։ Ընդհանուր առմամբ, «Նոյյան տապանի» բոլոր մեջբերված նյութերում կա «Ֆոտոլուրի» ջրանշանով 5 լուսանկար։

4. Դիմումատուն ընդգծել է, որ պահանջում է ոչ միայն լուսանկարներն օգտագործելիս պատշաճ հղում անել «Ֆոտոլուրին», այլեւ պայմանագիր կնքել գործակալության հետ եւ վճարել ծառայության դիմաց։

5. Ի պատասխան ԴՄ հարցման, Hayeli.am լրատվական ակումբը նշել է, թե խնդիրն առաջացել է թյուրիմացության արդյունքում, լուսանկարները վերցված են եղել Google որոնողական համակարգից, եւ «Ֆոտոլուրի» լոգոն արդեն կտված է եղել։ Հակադարձելով այս պատճառաբանությանը, Մելիք Բաղդասարյանը ներկայացրել է մի շարք հղումներ, որտեղ երեւում է, որ Hayeli.am-ի նյութերում առկա «Ֆոտոլուրի» լուսանկարներում (օրինակ՝ այստեղ,այստեղ եւ այստեղ) տարբերանշանն առկա է, հետեւաբար, ակնհայտ է, որ լրատվամիջոցի պատճառաբանությունները հիմնավոր չեն։ Դիմումի մեջ նշված մյուս լրատվամիջոցները ԴՄ հարցումներին չեն արձագանքել։ Ըստ Բաղդասարյանի՝ բոլոր նշված լրատվամիջոցների դեպքում խախտումները շատ ավելին են, քան ներկայացված է իր դիմումի մեջ։

6. Տեղեկատվական վեճերի խորհուրդը, դիմումատուի ցանկությամբ, քննել է դիմումը եւ հանդես է եկել եզրակացությամբ։

Բ. ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ

1. **ՀՀ օրենքը հեղինակային իրավունքի մասին**

Հոդված 3, մաս 1. Հեղինակային իրավունքի օբյեկտ է համարվում գրականության, գիտության եւ արվեստի բնագավառներում հեղինակի ինքնուրույն կամ այլ հեղինակների հետ իրականացրած ստեղծագործական աշխատանքի յուրօրինակ արդյունքը, որն արտահայտված է բանավոր, գրավոր կամ այլ օբյեկտիվ ձեւով, ներառյալ՝ մշտապես կամ ժամանակավոր պահպանվող էլեկտրոնային ձեւը, անկախ ստեղծագործության ծավալից, նշանակությունից, արժանիքներից ու ստեղծման նպատակից:
Հոդված 3, մաս 4. Հեղինակային իրավունքի օբյեկտներ են՝ ը) լուսանկարչական եւ նման եղանակով ստեղծված ստեղծագործությունները, որոնք համապատասխանում են սույն հոդվածի առաջին մասի դրույթներին:
Հոդված 9, մաս 1. Ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքը ծագում է ստեղծագործության ստեղծման փաստով: Ստեղծագործությունը համարվում է ստեղծված, եթե այն արտահայտված է ընկալելու հնարավորություն թույլատրող որեւէ օբյեկտիվ ձեւով եւ կախված չէ այդ իրավունքի պաշտոնական հաստատագրումից, ստեղծագործության գրանցումից եւ որեւէ այլ գործողության կատարումից:
Հոդված 13, մաս 1. Գույքային իրավունքներն ապահովում են հեղինակի նյութական շահերը՝ հեղինակին տալով բացառիկ իրավունք՝ թույլատրելու կամ արգելելու իր ստեղծագործության կամ դրա օրինակների օգտագործումը: Հեղինակը բացառիկ իրավունք ունի օգտագործելու իր ստեղծագործությունը ցանկացած ձեւով եւ եղանակով, ինչպես նաեւ երրորդ անձանց թույլատրելու կամ արգելելու դրա օգտագործումը:

2. **Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների** կանոնագիր

2.4. Հարգել հեղինակային իրավունքը, բացառել գրագողությունը, մեջբերումներ եւ արտատպություններ կատարելիս նշել **աղբյուրները**:

3. **Հայաստանի ԶԼՄ-ների էթիկայի դիտորդ մարմնի** աշխատակարգ

4.9. ԴՄ-ն Ինքնակարգավորման նախաձեռնության ոչ անդամների հրապարակումների վերաբերյալ բողոքների քննությունից հետո ընդունում եւ հրապարակում է փորձագիտական կարծիք կամ հայտարարություն:

Գ. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ

Հայաստանի ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը,

- քննելով «Ֆոտոլուր» լրատվական գործակալության բողոքն ընդդեմ Armday.am; Freenews.am; Analitik.am; Hayeli.am; Noyantapan.am; Civic.am; Mediahub.am լրատվամիջոցների,

- հաշվի առնելով ՀՀ օրենսդրությունը եւ ԶԼՄ-ների

գործունեության էթիկական նորմերը,

- ծանոթանալով խնդրի վերաբերյալ Տեղեկատվական վեճերի խորհրդի եզրակացությանը,

Արձանագրում է, որ

1. Հեղինակային իրավունքի օբյեկտ հանդիսացող լուսանկարներն օգտագործող լրատվամիջոցները պարտավոր են հարգել հեղինակի, տվյալ դեպքում՝ «Ֆոտոլուրի» իրավունքները, մասնավորապես՝ օգտագործումից առաջ թույլտվություն հայցել, բաժանորդագրվել, լուսանկարները հրապարակել առանց աղավաղման եւ հեղինակի հետ համաձայնեցված պայմաններով վճարել ֆինանսական փոխհատուցում:
2. Մելիք Բաղդասարյանի դիմումի մեջ հիշատակվող բոլոր դեպքերում նշված ԶԼՄ-ները խախտել են հեղինակային իրավունքի մասին ՀՀ օրենսդրության, ինչպես նաեւ՝ ԶԼՄ-ների էթիկայի կանոնագրի համապատասխան նորմերի պահանջները: Բացի այդ, որոշ նկարներ հրապարակվել են աղավաղումով՝ հեռացվել են հեղինակային նշանները:
3. Պատասխանողներից Hayeli.am-ի պարզաբանումը, թե լուսանկարները վերցվել են որոնողական համակարգից, արդեն հեռացված տարբերանշաններով, հիմնավոր չէ, քանզի համացանցից վերցված լինելը չի վերացնում դրանց՝ հեղինակային իրավունքի առարկա լինելու հանգամանքը, բացի դրանից Hayeli.am-ում առկա են «Ֆոտոլուրի» տարբերանշանով այլ լուսանկարներ եւս, որոնք օգտագործվել են հեղինակային իրավունքի խախտմամբ:
4. Քանի որ նախկինում ե՛ւ Մելիք Բաղդասարյանը, ե՛ւ «Ֆոտոլուրը» քանիցս բարձրաձայնել են հեղինակային իրավունքի խախտման հարցը, իսկ լրատվամիջոցները ամենօրյա ռեժիմով առնչվում են լուսանկարների օգտագործման խնդրին, նրանք պետք է տիրապետեն դրանց օգտագործման օրենսդրական եւ էթիկական կանոններին եւ հետեւեն դրանց, հատկապես, որ իրենց լրատվական գործունեությամբ, գովազդների եւ/կամ բաժանորդագրության միջոցով լրատվամիջոցներն իրենք ստանում են կամ հավակնում են ստանալ շահույթ:

   Հայաստանում մեդիանյութերի՝ լուսանկարների, տեսանյութերի եւ տեքստային նյութերի տարածման պրակտիկան ցույց է տալիս, որ հեղինակային իրավունքների խախտման դեպքերը համատարած են: Ուստի, Դիտորդ մարմինը հորդորում է հետեւել լրատվական նյութի վերարտադրության մասին ՀՀ օրենսդրությանն ու լրագրողական էթիկայի նորմերին: Մասնավորապես, Մելիք Բաղդասարյանի դիմումի մեջ նշված լրատվամիջոցներին հորդորում ենք տարածել այս փորձագիտական կարծիքը եւ հետագայում հրաժարվել «Ֆոտոլուրի» լուսանկարները առանց պատշաճ հղման եւ փոխհատուցման օգտագործելու պրակտիկայից՝ գործակալության հետ ձեւավորելով համապատասխան պայմանագրային հարաբերություններ, հնարավորինս բացառելով դատական հանգուցալուծումը: Այդուհանդերձ, եթե նշված լրատվամիջոցները ողջամիտ

ժամկետներում չեն կարգավորում խնդիրը, «Ֆոտոլուրը» ազատ է՝ դատական կարգով պաշտպանելու իր իրավունքը։

Ընդունվել է 2024 թ. փետրվարի 14-ին,
ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի հետեւյալ կազմով

Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
«Նյումեգ» հրատարակչության գլխավոր խմբագիր
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Երեւանի մամուլի ակումբի պատվավոր նախագահ
Դավիթ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ
«Մեդիամաքս» լրատվական գործակալության գլխավոր խմբագիր
Վիգեն ՍԱՐԳՍՅԱՆ
Երեւանի մամուլի ակումբի մասնագիտական էթիկայի հանձնաժողովի նախագահ
Կարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
«ԳԱԼԱ» ՀԸ գործադիր տնօրեն
ԱՐԱ ՂԱԶԱՐՅԱՆ
Իրավաբան
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ
Արմավիրի «ԱԼՏ» հեռուստաընկերության խմբագիր
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի գործադիր տնօրեն

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձեւավորել են ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցները, որոնք այս պահին 76-ն են: ԴՄ-ն ղեկավարվում է Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրով, որն ընդունվել է 2007 թվականի մարտի 10-ին, վերախմբագրվել՝ ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների 2023 թվականի հունիսի 25-ի ընդհանուր ժողովում: